

Հայոց Տ. Թէոդորոսի Սրբազան Կաթողիկոսի եւ ի / պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի Տ. Ծսայեայ արքեպիսկոպոսի առաջնոյ, գնեալ տեղիս սրբոյ / տաճարիս ի Ճննովացոց Կոմս անուն բարեպաշտ վաճառականի ուրուսն / Քէֆի քաղաքին Ղըրիմու՝ յամի Տեառն 1436-»

«Յետ հրկիզման դարձեալ նորոգեցաւ ի Հիմանց ի Հայրապետութեան Տ. Աստուածա/տրոյ Սրբազան Կաթողիկոսի, եւ ի պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տ. Գրիգորի Շղթայակրի / եւ ի պատրիարքութեան Պօլոյս Տ. Յօհաննու Բաղիշեցոյ Կօլօտի աշխատասիրո - թեամբ Սարգիս Խալֆայի 1733. ի Ղալաթիայ /»:

Ժամօթ. — Վերջին նորոգութեան (= 1888) յիշատակարանն ալ անմիջապէս ետքը ուրիշ քարի վրայ արձանագրուած է այսպէս.

«Նորակերտ յօրինեցաւ Ճակատ Ս. Եղեկեցոյս / եւ կամարածել քացմամբ ներքին միջնորմոց ներքին տաճարը խառնեցան ի մի / ի հայրապետութեան ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ Ս. Կաթողիկոսի / եւ ի պատրիարքութեան Կ. Պոլսոյ Տ. Յարութիւն վեհապետեան Ս. Արքեպիսկոպոսի ընտրելոյն ի պատրիարքութիւն Ս. Երուսաղէմի»: Թուականը (= 1888) զարգեբուն մէջ ծածկուած է:

1733. — Ս. Յակոբայ մատրան դրան վրայ.

«Աստուծով շինեցաւ սուրբ Տաճարս Հանդերձ Սեղանին / Սրբոյն Յակոբայ Մրծքնայ հայրապետին ի յիշատակ Պօլոյս Սրբազան պատրիարգի Տեառն Յօհաննու սրբաւէր վարդապետի հարազատ / սպասաւոր Գասպար ղալրի եւ ծնողացն Գրիգորի եւ Եղիսա/բեթի եւ զարմից նորին Սեբաստեան ի թվին ՌՃԶԲ (= 1733) ի»: (Հմմտ. էջ 69, Ծանօթ. 1):

1733. — Փոքրիկ սպիտակ մարմարի մը ձուռձեւ շրջանակին վրայ, որուն մէջ փորագրուած է Աստուածածին Յիսուս մանուկ իր գիրկը: Երբեմն լքուած էր այս քարը. Հիմայ զետեղուած է Ամենափրկչի մատրան դրան քով, հարաւային պատին վրայ:

«Յիշատակ է Տէր Մարտիրոսի որդի մահտեսի Ալիքսանին ՌՃԶԲ (= 1733). որ եւ փոքրաւոր Բաղիշեցի պատրիարք Ռհաննէս վարդապետին»: